Կրկնակի փորձաքննության դիմումի և անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման եղանակը

Կրկնակի փորձաքննություն նշանակելու համար դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը կարող եք ներկայացնել ապահովագրական հատուցման վճարման (մերժման) փաթեթի ծանուցումն ուղարկող ապահովագրական ընկերությանը:

Ընդ որում՝ Բյուրոյին անդամակցող ապահովագրական ընկերությունների անվանումները և դրանց կայքերի հասցեները հրապարակված են Բյուրոյի կայքի առաջին էջում, իսկ ապահովագրական ընկերությունների գրասենյակների հասցեները հրապարակված են ապահովագրական ընկերությունների ինտերնետային կայքերում:

Տեղեկացնում ենք նաև, որ «ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ» RL 1-001 կանոնների համաձայն՝ պատշաճ էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկված դիմումները համարվում են ստորագրված համապատասխան Ապահովադրի, Ապահովագրված անձի կամ տուժողի կողմից: